ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն – Ավանեսյան Անահիտ

2. Զբաղեցրած պաշտոնը – Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները – Տալլինն, Էստոնիա, 2018թ. հունիսի 12-14

4. Հրավիրող կողմը – ԱՀԿ

5. Գործուղման նպատակը

Էստոնիայի մայրաքաղաք Տալլիննում հունիսի 13-14-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպության ու Էստոնիայի առողջապահության և աշխատանքի նախարարության համատեղ ջանքերով անցկացվեց «Առողջապահական համակարգերն ի նպաստ բարգավաճման և համերաշխության. ոչ ոքի չթողնել առանց ուշադրության» խորագրով ԱՀԿ բարձրաստիճան խորհրդակցությունը:

Հանդիպումը նվիրված էր Տալլիննյան խարտիայի ստորագրման տասնամյակին և նպատակ ուներ ներկայացնել ԱՀԿ նորարարական նախաձեռնությունները, առաջադեմ մոտեցումները՝ դրա հիման վրա ձևավորելու բնակչության պահանջներին ուղղված և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակներին և ԱՀԿ «Առողջություն 2020» եվրոպական քաղաքականությանը համահունչ նոր հայեցակարգ:

6. Քննարկված թեմաները

Քննարկման հիմնական թեմաները երեքն էին՝ առողջապահական համակարգի ծածկույթի հասանելիության և ֆինանսական պաշտպանվածության մակարդակի բարելավում, երկրի առողջապահական համակարգում ներդրումներ կատարելու անհրաժեշտություն, նորարարական մոտեցումների կիրառում՝ մարդկանց

պահանջները բավարարելու նպատակով: Շեշտադրվեց հանրային առողջության դերը՝ որպես ամենածախսարդյունավետ ներդրումային ոլորտ:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

«Առողջապահական համակարգերն ի նպաստ բարգավաճման և համերաշխության. ոչ ոքի չթողնել առանց ուշադրության» խորագրով ԱՀԿ բարձրաստիճան խորհրդակցությանը մասնակցում էին ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի ավելի քան 50 անդամ-պետությունների ներկայացուցիչներ:

Բացմանը ողջույնի խոսքով հանդես եկան Էստոնիայի Նախագահ Կերստի Կալյուլայդին և Առողջապահության նախարար Ռինա Սիկուտը, ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի ղեկավար Ժուժանա Յակաբը և ԱՀԿ եվրոպական տարածաշրջանային գրասենյակի առողջապահական համակարգերի բաժնի տնօրեն Հանս Կլյուգեն: Երկօրյա խորհրդակցության նիստերը վարեցին անդամ-պետությունների առողջապահության ոլորտի բարձրաստիճան ներկայացուցիչներ:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Տալլիննյան խարտիայի շրջանակներում վերահաստատվեց, որ անդամ-պետությունների ազգային առողջապահության համակարգերի հզորացման միջոցով պետք է բարելավել բնակչության առողջությունը՝ միաժամանակ հաշվի առնելով տարածաշրջանում առկա սոցիալական, մշակութային և տնտեսական տարբերությունները: Խարտիայի շրջանակներում անդամ-պետությունները պարտավորություն են ստանձնել խրախուսել թափանցիկությունը և հաշվետվողականությունը՝ առողջապահության համակարգերի գործունեությունը բարելավելու հարցում՝ չափելի արդյունքների հասնելու նպատակով: Գնահատման այս աշխատանքները երաշխավորում են առողջապահության համակարգի ռազմավարությունը, որը կենտրոնանում է բնակչության առողջության վրա ազդեցությունները բարելավելու շուրջ, այն մասին, որ առողջապահության քաղաքականությանն առնչվող որոշումներ կայացնողները պատշաճ տեղեկացված լինեն առողջապահության խնդիրների և դրանց գործոնների վերաբերյալ, որ

միջգերատեսչական համագործակցությունը նպաստի երկրի բնակչության առողջության բարելավմանը և այդ համագործակցությունը բոլոր շահագրգիռ կողմերի միջև կարգավորվի թափանցիկության և հաշվետվողականության մթնոլորտում:

9. Առաջարկությունները

«Առողջապահական համակարգերն ի նպաստ բարգավաճման և համերաշխության. ոչ ոքի չթողնել առանց ուշադրության» խորագրով ԱՀԿ բարձրաստիճան խորհրդակցության ավարտին մասնակիցները հանդես եկան համընդհանուր հայտարարությամբ, որով հայտնեցին իրենց վճռականությունը՝ առողջապահական համակարգի բարելավմանն ուղղված աշխատանքների ծավալների ընդլայնման կապակցությամբ և ուժ ու միջոցներ ներդնելու իրենց առողջապահական համակարգերին անհրաժեշտ խորքային փոփոխությունների կառավարման մեխանիզմների և գործընթացների ստեղծման համար:

Անդամ-պետությունները պայմանավորվեցին անել հնարավորինս ամեն ինչ, որպեսզի առողջապահական համակարգերը չլինեն պասսիվ՝ նոր պայմանների ազդեցությամբ առաջացող խնդիրներին արձագանքելու տեսանկյունից:

10. Գործուղվողները

Ավանեսյան Անահիտ

11. Ստորագրությունը, ամսաթիվը

2018թ. հուլիսի 2

02.07.2018

X

VERIFIED OCSP 02.07.2018 18:41:21 GMT+4

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157